

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

03.02.2003թ.

ժ. 11.00

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Գանիելյան, Վ. Գավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Գ. Մարտիրոսյան (*Գների և միջազգային համադրումների բաժնի պետ*)

**Օրակարգի նախագծում` մեկ հարց.**

1. Հայաստանի Հանրապետությունում 2003 թվականի սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների հաշվարկման մասին.

*/Զեկուցող` Գ. Մարտիրոսյան/*

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները- կողմ`6, դեմ`0, ձեռնպահ`0/*

**Լսեցին՝**

1. Հայաստանի Հանրապետությունում 2003 թվականի սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների հաշվարկման մասին.

*/Զեկուցող` Գ. Մարտիրոսյան/*

Նշվեց, որ համաձայն ՀՀ-ում սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության, ամեն տարի կատարվում է սպառողական զամբյուղի կշիռների վերահաշվարկ, ինչի համար հիմք են հանդիսանում տնային տնտեսությունների բյուջետային ծախսումների մասին ամենամսյա հետազոտության նյութերը: 2003 թվականի սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների վերահաշվարկ կատարվել է` հիմք ընդունելով տնային տնտեսությունների 2001 թվականի չորրորդ եռամսյակի և 2002 թվականի հունվար-սեպտեմբերի հետազոտության արդյունքները` կատարելով հետևյալ լրահաշվարկները.

1. Սպառողական զամբյուղում ընդգրկված 400 անվանում ապրանք (ծառայություն) – ներկայացուցիչների տեսակարար կշիռների վերահաշվարկ` հիմք ընդունելով յուրաքանչյուր ապրանքատեսակի (ծառայության տեսակի) գնային փոփոխությունները 2001 թվականի չորրորդ եռամսյակից և 2002 թվականի հունվար-սեպտեմբերից մինչև 2002 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածներում:

2. Կատարվել է ՀՀ հետազոտվող 10 բնակավայրերի (մարզերի) տեսակարար կշիռների վերահաշվարկ` հիմք ընդունելով բնակչության թվաքանակը, ապրանքաշրջանառության և վճարովի ծառայության ծավալների մասին ցուցանիշները:

**Որոշեցին՝** հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում 2003 թվականի սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների հաշվարկման մեթոդաբանությանը:

*/Արձանագրային/*

*/Զվեարկության արդյունքները – կողմ` 6, դեմ`0, ձեռնպահ`0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան